ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԿԱԶՄՄԱՆ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ

Բովանդակություն

Ներածություն. 3
1. Աշխատակազմի հաստիքացուցակի հաստատումը. 4
2. Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում նախատեսվող պաշտոնների դասակարգումը. 5
2. 1 Համայնքային քաղաքական պաշտոնների դասակագումը և դրանց զբաղեցման չափանիշները. 5
2. 2 Համայնքային վարչական պաշտոնների դասակագումը և դրանց զբաղեցման չափանիշները. 7
2. 3 Համայնքային հայեցողական պաշտոնների դասակագումը և դրանց զբաղեցման չափանիշները. 7
2. 4 Համայնքային ծառայության պաշտոնների դասակագումը և դրանց զբաղեցման չափանիշները. 9
2. 5 Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք. 10
2. 6 Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձինք. 10

3. Պաշտոնային դրույքաչափերի հաստատումը. 11
4. Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները 12
5. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը. . . . . .

. 13
6. Աշխատակազմի հաստիքացուցակը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման և հավելվածների օրինակելի ձևեր
. 14

Ներածություն

Սույն մեթոդական ուղեցույցում ներկայացված են համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) հաստիքացուցակի կազմման, հաստիքների թվաքանակի և պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման, ինչպես նաև հաստիքացուցակում նախատեսվող հաստիքների զբաղեցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշների վերաբերյալ մեթոդական խորհրդատվություններ, որոնք կիրառելիս պետք է հաշվի առնել համայնքներին բնորոշ առանձնահատկությունները:

Ներկայումս Աշխատակազմերի հաստիքացուցակներում առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ մի շարք Աշխատակազմերի հաստիքացուցակներում տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հաստիքների թվաքանակը գերազանցում է համայնքային ծառայողների թվաքանակին, այն դեպքում, երբ Աշխատակազմերի մասնագիտական գործունեությունն իրականացնում են համայնքային ծառայողները:

Միաժամանակ, մի շարք Աշխատակազմերի հաստիքացուցակներում մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց հաստիքները (Օրինակ՝ օպերատոր, տնտեսական զարգացման պատասխանատու) նախատեսվում են հայեցողական, կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմում, մինչդեռ դրանք պետք է նախատեսվեն համայնքային ծառայության պաշտոններում:

Համապատասխան Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողներն ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:

Միաժամանակ, համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը, ըստ պաշտոնների ենթախմբերի, աստիճանակարգված չեն՝ ելնելով տվյալ պաշտոնը զբաղեցնող անձի աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունից:

Սույն մեթոդական ցուցումների կիրառմամբ կսահմանվեն համայնքապետարանների աշխատակազմերի միատեսակ կառուցվածքը,

հաստիքացուցակները, կանոնակարգված կդառնան համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը, հնարավորություն կընձեռնվի միավորված համայնքներում հաստատելու աշխատակազմի օպտիմալ կառուցվածք, որի արդյունքում կբարձրանա համայնքի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը և առավել արդյունավետ կօգտագործվեն համայնքի ֆինանսական միջոցները:

1. Աշխատակազմի հաստիքացուցակի հաստատումը

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր պաշտոնն ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, անհրաժեշտության դեպքում մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքները (համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում), աշխատողներ քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:

Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ: Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատողների քանակը, կառուցվածքը կամ հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու կամ լրացնելու հարցում որոշում է կայացնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատման, անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին (այսուհետ՝ Լիազոր մարմին) դիմելու մասին: Աշխատակազմի աշխատողների քանակը, կառուցվածքը կամ հաստիքացուցակը հաստատված, ինչպես նաև փոփոխված կամ լրացված է համարվում Լիազոր մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու, անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Համայնքի ղեկավարը աշխատակազմի և հիմնարկների կառուցվածքը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը ավագանու կողմից հաստատվելուց (վերահաստատվելուց) հետո՝ մեկամսյա ժամկետում, նշանակումներ է կատարում համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններում:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնավարման ընթացքում չեն կարող կատարվել աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքային և հաստիքացուցակի փոփոխություններ:

2. Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում նախատեսվող պաշտոնների դասակարգումը

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքային քաղաքական, համայնքային հայեցողական, համայնքային վարչական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է **համայնքային ծառայողների**, ինչպես նաև անձնակազմի գործառույթների կատարման համար անհրաժեշտ **տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց** միջոցով, որոնց հաստիքները ևս նախատեսվում են Աշխատակազմի հաստիքացուցակում: Աշխատակազմն ապահովում է համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում նրանց մասնակցությունը:

Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը, իսկ ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը:

Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում նախատեսվում են տվյալ համայնքապետարանի աշխատակազմի բոլոր հաստիքները, մասնավորապես՝ համայնքային քաղաքական, համայնքային վարչական, համայնքային հայեցողական, համայնքային ծառայության, քաղաքացիական աշխատանք և տեխնիկական սպասարկում իրականացնող, ինչպես նաև սահմանվում են հաստիքային միավորների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը:

2. 1 Համայնքային քաղաքական պաշտոնների դասակագումը, թվաքանակի սահմանումը և դրանց զբաղեցման չափանիշները

Համայնքային քաղաքական պաշտոններ են համայնքի ղեկավարի, նրա տեղակալների և համայնքի ավագանու անդամի պաշտոնները:

Համայնքային քաղաքական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն օժտված է քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում այդ որոշումների համար:

Ընտրական օրենսգրքի 104. 1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են մեծամասնական կամ համամասնական ընտրակարգով:

Մեծամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում՝

Ընտրական օրենսգրքի 104. 1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև 4000 ընտրող ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով:

Համայնքի ղեկավար և ավագանու անդամ կարող են դառնալ ընտրության օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք:

Համայնքի ղեկավարն ունի տեղակալ (տեղակալներ):

Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում է, բացառությամբ համամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ղեկավարի տեղակալի, և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ տեղակալը (տեղակալներից մեկը) փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

Համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում՝

Ընտրական օրենսգրքի 104. 1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում համայնքի ավագանու ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով:

Համայնքի ղեկավարն ընտրվում է օրենքի ուժով կամ ավագանու կողմից: Ավագանու անդամ (համայնքի ղեկավար) կարող է դառնալ ընտրության օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և ավագանու անդամ համարվող անձը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում համայնքի ղեկավարն ունի մեկ առաջին տեղակալ, որը ավագանու անդամ է: Համայնքի ղեկավարը կարող է ունենալ և՝ երկու տեղակալ:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը փոխարինում է համապատասխան համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

Համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածությունը ավագանու կողմից երկու անգամ չհաստատվելու դեպքում վերջինս նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարի տեղակալներին պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

2. 2 Համայնքային վարչական պաշտոնների դասակարգումը և դրանց զբաղեցման չափանիշները

Համայնքային վարչական պաշտոններ՝ Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնները:

Համայնքային վարչական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձն ապահովում է Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար:

Վարչական պաշտոններ կարող են զբաղեցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն բարձրագույն կրթություն, բացառությամբ՝ 1000-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրի վարչական ղեկավարի:

Բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված, 500-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ՝ համայնքի կենտրոնի, պետք է ունենա վարչական ղեկավար: Վարչական ղեկավարը տվյալ բնակավայրի հաշվառված բնակիչ է:

Բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված, 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրում վարչական ղեկավար ունենալը կամ բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումն մեկ այլ բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելը, որոշվում է համայնքի ավագանու կողմից: Համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի կազմում ընդգրկված, 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրում վարչական ղեկավար ունենալու կամ բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը մեկ այլ բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին:

2. 3 Համայնքային հայեցողական պաշտոնների դասակագումը, թվաքանակի սահմանումը և դրանց զբաղեցման չափանիշները

Համայնքային հայեցողական պաշտոններ՝ համայնքի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, համայնքների ղեկավարի տեղակալի օգնականի, համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետների պաշտոնները:

Համայնքային հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կատարում է իր անմիջական ղեկավարի հանձնարարականները և պատասխանատվություն է կրում այդ հանձնարարականների կատարման համար:

Համայնքային հայեցողական պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը:

<<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ **համայնքի ղեկավարի խորհրդականի** պաշտոն կարող են զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող, հանրային ծառայության առնվազն երեք տարվա կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ ունեցող և 25 տարին լրացած անձինք:

Համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնի համար նախատեսվում է պաշտոնի անձնագիր, որի համար չափանիշներ սահմանում է այն պաշտոնատար անձը, որի անմիջական ենթակայությամբ աշխատելու է խորհրդականը: Պաշտոնի անձնագիրը, ներկայացված չափանիշներին համապատասխան, հաստատում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը: Խորհրդականի պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնի է նշանակվում առանց մրցույթի՝ բավարարելով տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պահանջները:

Համայնքի ղեկավարի օգնականի պաշտոն կարող են զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող անձինք:

Մամուլի քարտուղարի պաշտոն կարող են զբաղեցնել հասարակայնության հետ կապերի կամ լրագրության բնագավառում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև յոթ անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար, յոթից ավելի անդամ ունեցող խմբակցությունը՝ մեկ գործավար և **մեկ փորձագետ:**

Սույն մեթոդական ուղեցույցով հայեցողական (բացառությամբ՝ համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետների) պաշտոնների մասով առաջարկվում է նախատեսել՝

- մինչև 1000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 1 հայեցողական պաշտոն:
- 1001-ից 4000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 2 հայեցողական պաշտոն:
- 4001-ից 10000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 3 հայեցողական պաշտոն:
- 10001-ից 25000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 5 հայեցողական պաշտոն:
- 25001-ից 70000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 7 հայեցողական պաշտոն:
- 70001 և ավելի բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 9 հայեցողական պաշտոն:

2. 4 Համայնքային ծառայության պաշտոնների դասակարգումը և դրանց զբաղեցման չափանիշները

Համայնքային ծառայության պաշտոնը արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն և մասնագիտական գործունեություն պահանջող հաստիքային միավոր է, որը նախատեսված է համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով:

Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև նորմատիվ իրավական այլ ակտերով:

Համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են համայնքային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ:

Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խումբ դասակարգվում է 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: Համայնքային ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

Համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբում ընդգրկվում է 15 հազարից ավելի բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը:

Համայնքային ծառայության մասով՝ յուրաքանչյուր համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում անհրաժեշտ է նախատեսել տնտեսական զարգացման պատասխանատուի համայնքային ծառայողի հաստիք, որը կարող է նախատեսվել որպես աշխատակազմի մասնագետ, կամ կարող է նախատեսվել <<Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի>> բաժնում:

5000-ից ավել բնակիչ ունեցող, ինչպես նաև միավորված համայնքների աշխատակազմերում նախատեսվում է համայնքային սոցիալական աշխատողի հաստիք: Այն համայնքներում որտեղ նախատեսված չէ <<Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի>> բաժին, նշված հաստիքը կարող է նախատեսվել որպես աշխատակազմի մասնագետ:

<<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի համայնքային ծառայության պաշտոն: Ելնելով նշվածից՝ աշխատակազմի հաստիքացուցակներում, որպես համայնքային ծառայության

պաշտոն, անհրաժեշտ է նախատեսել նշված պաշտոնը անձնակազմի կառավարման ստորաբաժանման, իսկ նշված ստորաբաժանման բացակայության դեպքում՝ որպես աշխատակազմի մասնագետ:

Միավորված համայնքների բնակավայրի օպերատորների հաստիքները անհրաժեշտ է նախատեսել որպես համայնքային ծառայության պաշտոններ, հաշվի առնելով նրանց կողմից իրականացվող գործառույթների բնույթը և դրա համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների մակարդակը: Օպերատորների հաստիքները՝ որպես համայնքային ծառայության հաստիք նախատեսելը հնարավորություն կտա վերջիններիս պարբերաբար վերապատրաստելու և բարձրացնելու վերջիններիս մասնագիտական գիտելիքների մակարդակը:

Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

2. 5 Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք

Տեխնիկական սպասարկումը ներառում է տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների, լիազորությունների ու գործառույթների իրականացումը, ինչպես նաև քաղաքական, վարչական պաշտոններ զբաղեցնող անձանց և համայնքային ծառայողների լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական աջակցությունը:

Համայնքների ղեկավարներին առաջարկվում է համայնքապետարանների աշխատակազմերի հաստիքացուցակներում նախատեսել հավաքարարի, պահակի, տնտեսվարի, գործավարի, վարորդի, էլեկտրիկի, բանվորի և այլ հաստիքներ՝ ելնելով

համայնքի առանձնահատկություններից, որոնց ընդհանուր թվաքանակը չպետք է գերազանցի համայնքային ծառայության հաստիքների 40 տոկոսը:

2. 6 Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձինք

Քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով:

3. Պաշտոնային դրույքաչափերի սահմանումը

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի՝ 832. 000 ՀՀ դրամի նկատմամբ հետևյալ տոկոսաչափերով.

- ✓ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 42,57 տոկոս.
- ✓ 1001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 52,06 տոկոս.
- ✓ 5001-ից մինչև 20000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 66,55 տոկոս.
- ✓ 20001-ից մինչև 75000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 71,04 տոկոս.
- ✓ 75000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 85,52 տոկոս:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

՝ աշխատակազմի և համայնքային հիմնարկների աշխատողների վարձ+ատրությունն օրենքով սահմանված կարգով կատարվում է համայնքի բյուջեի հաշվին: Աշխատավարձը ներառում է պաշտոնային դրույքաչափը, հավելավճարները, պարգևատրումները և հավելումները:

Համայնքապետարանի աշխատակազմի յուրաքանչյուր աշխատողի պաշտոնային դրույքաչափը չի կարող գերազանցել տվյալ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի՝

- ✓ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,95 տոկոսը.
- ✓ 1001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,65 տոկոսը.
- ✓ 5001-ից մինչև 20000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,43 տոկոսը.
- ✓ 20001-ից մինչև 75000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,26 տոկոսը.
- ✓ 75000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,14 տոկոսը:

Հիմք ընդունելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության

պաշտոնների միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողներն ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք, բացառությամբ՝ պետության պատվիրակած լիազորություններ իրականացնող համայնքային ծառայողների, որոնց պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով որոշվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների շրջանակներում:

Այս առումով առաջարկվում է համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը սահմանել աստիճանակարգված՝ ելնելով տվյալ պաշտոնը զբաղեցնող անձի աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունից, որոշումներ կայացնելու լիազորություններից, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության աստիճանից, պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթների շրջանակից:

Բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների համար կարող են սահմանվել տարբեր պաշտոնային դրույքաչափեր՝ ելնելով տվյալ բնակավայրի բնակչության թվաքանակից կամ այլ չափանիշներից:

Պաշտոնային դրույքաչափերն անհրաժեշտ է սահմանել՝ հաշվի առնելով <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> ՀՀ օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

4. Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները

ՀՀ համայնքների ղեկավարներին առաջարկվում է Աշխատակազմի հաստիքացուցակում նախատեսել ներքոհիշյալ ոլորտները կարգավորող կառուցվածքային ստորաբաժանումներ, կամ դրանց բացակայության դեպքում՝ համապատասխան մասնագետների հաստիքներ՝

- Քաղաքաշինության և հողաշինության բաժին
- Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին
- Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
- Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին
- Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին
- Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին
- Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին
- Աջակցող գործառույթների՝ քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

- Իրավաբանական բաժին
- Գնումների բաժին
- այլ բաժիններ

5. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը

Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը և համայնքային ծառայության յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

«Աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշումը՝ կից հավելվածներով և համապատասխան հիմնավորումներով ներկայացվում է Լիազորված մարմին՝ Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու նպատակով:

Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատման մասին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից համապատասխան իրավական ակտի ընդունումից հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվում են համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը:

Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատումից հետո անհրաժեշտ է համապատասխան հարցում ուղարկել Լիազոր մարմին (կցելով համապատասխան պաշտոնների անձնագրերը) կադրերի ռեզերվում գրանցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով և պատասխան գրությունը ստանալուց հետո կնքել ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 29. 1. -ին հոդվածի համաձայն՝ համայնքների միավորման կամ բաժանման արդյունքում ձևավորված նոր համայնքի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններն զբաղեցվում են մրցութային կարգով:

Մինչև թափուր պաշտոնի համար մրցույթի հայտարարելը սահմանված կարգով համայնքի ղեկավարի որոշմամբ անհրաժեշտ է կազմավորել մրցութային հանձնաժողովը, որից հետո սահմանված կարգով անցկացնել մրցույթները:

6. Աշխատակազմի հաստիքացուցակը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման և հավելվածների օրինակելի ձևեր

Ստորև ներկայացված են Աշխատակազմի հաստիքացուցակը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևեր:

Հավելված 1

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ---------- ՄԱՐԶԻ
---------- ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » ---------- 20-- Թ. N – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ——— ՄԱՐԶԻ ----------
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ———— մարզի ---------- համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության ———— մարզի ---------- համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Առաջարկել ---------- համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

Անուն Ազգանուն	Կողմ_____	Դեմ_____	Ձեռնպահ_____
	Կողմ_____	Դեմ_____	Ձեռնպահ_____
	Կողմ_____	Դեմ_____	Ձեռնպահ_____
	Կողմ_____	Դեմ_____	Ձեռնպահ_____

---------- համայնքի ղեկավար՝ Անուն, Ազգանուն

« » _____ 20—թ.

Հավելված 1
ՀՀ ---------- մարզի
----------համայնքի ավագանու
20--թ. --------- ---ի N -Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ---------- ՄԱՐԶԻ ----------
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քաղաքաշինության և հողաշինության բաժին
2. Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին
3. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
4. Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին
5. Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին
6. Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին
7. Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին
8. Իրավաբանական բաժին

9. Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

10. Գնումների բաժին

Հավելված 2
ՀՀ ---------- մարզի
----------համայնքի ավագանու
20--թ. --------- ---ի N -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ---------- ՄԱՐԶԻ ---------- ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ ——:

Հ/Հ	*ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ*	*ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ*	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)*	*ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ*	*Աշխատավարձի չափը*
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1.	***Համայնքի ղեկավար***				
2.	***Համայնքի ղեկավարի տեղակալ***				
3.	***Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական (ըստ անհրաժեշտության)***				
	Ընդամենը				
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
4.	***Համայնքի ղեկավարի խորհրդական***				
5.	***Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար***				
6.	***Համայնքի ղեկավարի օգնական***				
7.	***Խմբակցության փորձագետ***				

	Ընդամենը				
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
8.	***Վարչական ղեկավար***				
	Ընդամենը				
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
9.	***Աշխատակազմի քարտուղար***				
Քաղաքաշինության և հողաշինության բաժին					
10.	***Բաժնի պետ***				
11.	***Բաժնի պետի տեղակալ***				
12.	***Գլխավոր մասնագետ***				
13.	***Առաջատար մասնագետ***				
14.	***Առաջին կարգի մասնագետ***				
15.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին					
15.	***Բաժնի պետ***				
16.	***Բաժնի պետի տեղակալ***				
17.	***Գլխավոր մասնագետ***				
18.	***Առաջատար մասնագետ***				
19.	***Առաջին կարգի մասնագետ***				
20.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին					
21.	***Բաժնի պետ***				
22.	***Բաժնի պետի տեղակալ***				
23.	***Գլխավոր մասնագետ***				
24.	***Առաջատար մասնագետ***				
25.	***Առաջին կարգի մասնագետ***				
26.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին					
27.	***Բաժնի պետ***				
28.	***Բաժնի պետի տեղակալ***				
29.	***Գլխավոր մասնագետ***				
30.	***Առաջատար մասնագետ***				
31.	***Առաջին կարգի մասնագետ***				
32.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին					
33.	***Բաժնի պետ***				

34.	***Բաժնի պետի տեղակալ***				
35.	***Գլխավոր մասնագետ***				
36.	***Առաջատար մասնագետ***				
37.	***Առաջին կարգի մասնագետ***				
38.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին					
39.	***Բաժնի պետ***				
40.	***Բաժնի պետի տեղակալ***				
41.	***Գլխավոր մասնագետ***				
42.	***Առաջատար մասնագետ***				
43.	***Առաջին կարգի մասնագետ***				
44.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Իրավաբանական բաժին					
45.	***Բաժնի պետ***				
46.	***Բաժնի պետի տեղակալ***				
47.	***Գլխավոր մասնագետ***				
48.	***Առաջատար մասնագետ***				
49.	***Առաջին կարգի մասնագետ***				
50.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին					
51.	***Բաժնի պետ***				
52.	***Բաժնի պետի տեղակալ***				
53.	***Գլխավոր մասնագետ***				
54.	***Առաջատար մասնագետ***				
55.	***Առաջին կարգի մասնագետ***				
56.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Գնումների *բաժին*					
57.	***Բաժնի պետ***				
58.	***Բաժնի պետի տեղակալ***				
59.	***Գլխավոր մասնագետ***				
60.	***Առաջատար մասնագետ***				
61.	***Առաջին կարգի մասնագետ***				
62.	***Երկրորդ կարգի մասնագետ***				
Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)					
63.	***Գլխավոր մասնագետ***				
64.	***Առաջատար մասնագետ***				
65.	***Առաջին կարգի մասնագետ***				
	Ընդամենը				

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					
66.	Հավաքարար				
67.	Պահակ				
68.	Գործավար				
69.	Տնտեսվար				
70.	Վարորդ				
71.	Բանվոր				
72.	Էլեկտրիկ				
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					
73.	Ցանցային ադմինիստրատոր				
74.	Անասնաբույժ				
	ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ				